"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР
ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ
ОРГАНИЗАЦИЯ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET
NATIONAL ACADEMIC THEATRE,
NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

«ԱՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

N 752-Լ

«12» մայիսի 2025 թ.
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՐՁԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 22-ի N 652-Ա հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Թատրոն) կանոնադրության 25-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջներով՝

հրամայում եմ.

1. Սահմանել, որ Թատրոնում գեղարվեստաստեղծագործական աշխատանքների փորձերը կարող են անցկացվել միայն Թատրոնի տնօրենի կամ նրան փոխարինող անձի, այսուհետ՝ Թատրոնի տնօրեն, կողմից հաստատված փորձերի ժամանակացույցի համաձայն: Փորձերի ժամանակացույցերը կարող են փոփոխվել միայն Թատրոնի տնօրենի գրավոր համաձայնությամբ:

2. Փորձերի ժամանակացույցերը հաստատվում են ամիսը երկու անգամ՝ յուրաքանչյուր ամսվա տասնհինգին և երեսունին՝ հաջորդ ամսվա համար, նշված օրերը ոչ աշխատանքային օրվա հետ համընկնելու դեպքում՝ հաջորդ աշխատանքային օրը:

3. Հաստատման ներկայացվող փորձերի ժամանակացույցերի թղթային տարբերակներին կցվում են նաև դրանց էլեկտրոնային տարբերակները:

4. Փորձերի ժամանակացույցերը Թատրոնի տնօրենի հաստատմանն իրավունք ունի ներկայացնելու միայն համապատասխան ստորաբաժանման ղեկավարը կամ նրան փոխարինող անձը՝ ստորագրությամբ, նշելով ժամանակացույցի ներկայացման օրը: Եթե միաժամանակ փորձին պետք է մասնակցեն մեկից ավելի ստորաբաժանումներ, ապա նշված ժամանակացույցը պետք է ստորագրված լինի մասնակից բոլոր ստորաբաժանումների ղեկավարների կողմից:

5. Բեմական փորձերի ժամանակացույցը՝ ստորագրված մասնակից բոլոր ստորաբաժանումների ղեկավարների կողմից, տնօրենի հաստատմանն է ներկայացնում Թատրոնի ռեժիսորական ղեկավարման մասի ղեկավարը կամ համակարգողը:

6. Փորձերի ժամանակացույցերում պարտադիր պետք է հստակ նշվեն փորձն իրականացնող ստորաբաժանումը կամ ստորաբաժանումները, փորձի օրը, սկզբի և ավարտի ժամերը, փորձի վայրը, փորձի նպատակը, փորձի համար անհրաժեշտ սպասարկող կամ օժանդակ աշխատանքներն ու դրանց մասնակիցները և փորձի լիարժեք կազմակերպման համար այլ տվյալներ:

7. Թատրոնի տնօրենի կողմից հաստատված փորձի ժամանակացույցը՝ հաստատման օրը փակցվում է Թատրոնի մուտքի մոտ դրա համար նախատեսված տեղում, այն փորձադահլիճների մուտքերի մոտ, որտեղ պետք է անցկացվեն փորձերը, ինչպես նաև փորձերի ժամանակացույցերի էլեկտրոնային տարբերակները պետք է ուղարկվեն մասնակիցներին էլեկտրոնային այն հաղորդակցության միջոցով, որը տրամադրել է փորձի մասնակիցը:

8. Թատրոնի տնօրենի կողմից հաստատված փորձերի ժամանակացույցերն ուժի մեջ են մտնում դրանք Թատրոնի մուտքի համապատասխան տեղում փակցնելու օրվանից:

9. Փորձերի ժամանակացույցերը համարվում են ժամանակացույցերում նշված Թատրոնի ստորաբաժանումների աշխատողին տրված գրավոր հանձնարարություններ:

10. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանը հաջորդող երեք օրվա ընթացքում Թատրոնի տնօրենի հաստատմանը ներկայացնել փորձերի ժամանակացույցերի օրինակելի ձևերը:

11. Թատրոնի առցանց տոմսերի վաճառքի օպերատորին՝ սույն հրամանը հրապարակել Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում առանձին բաժնում՝ նշելով ակտի հրապարակման օրը:

12. Թատրոնի անձնակազմի կառավարման բաժնին՝ սույն հրամանի մասին պատշաճ ծանուցել Թատրոնի բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին և համապատասխան այլ աշխատողներին:

13. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում առանձին բաժնում՝ նշելով ակտի հրապարակման օրմանը հաջորդող շաբաթվա առաջին աշխատանքային օրը:

ARMENIAN NATIONAL OPERA AND BALLET THEATRE

Թատրոնի տնօրեն՝ Կ. Դուրգարյան

ք. Երևան
«12» մայիսի 2025 թ.